



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. հոկտեմբերին /վերլուծություն/

2005թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10050 գործարքներ, որոնց քանակը 2004թ. հոկտեմբերի համեմատ աճել է 15.8%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ նվազել՝ 3.6%-ով:

2005թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3996 օտարման գործարքների 86.3%-ը կազմել են առուվաճառքները, 13.4%-ը՝ նվիրատվությունները և 0.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.2%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 40.7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. հոկտեմբերին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2004թ. հոկտեմբերի համեմատ աճել է 10.2%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ՝ 4.4%-ով: 2005թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.8%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 1.4%-ով:

2005թ. հոկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2005թ. հոկտեմբերին համարժեք է 449.4դրամին/

Համայքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հոկտեմբերին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		հոկտեմբեր 2004թ.	հոկտեմբեր 2005թ.	սեպտեմբեր 2005թ.
Կենտրոն	157300.0-435900.0	247400.0	308500.0	303800.0
Արաբկիր	112350.0-314600.0	197500.0	253400.0	250000.0
Քանաքեռ-Զեյթուն	89900.0-224700.0	119900.0	156800.0	151600.0
Նոր-Նորք	89900.0-188700.0	105100.0	150300.0	148700.0
Ավան	80900.0-157300.0	101500.0	132000.0	130100.0
Էրեբունի	71900.0-179800.0	97500.0	131100.0	130400.0
Շենգավիթ	71900.0-202200.0	115200.0	159400.0	156200.0
Դավթաշեն	89900.0-202200.0	124000.0	160400.0	157700.0
Աջափնյակ	89900.0-202200.0	113800.0	150100.0	148400.0
Մալաթիա-Սեբաստիա	89900.0-202200.0	112900.0	146500.0	144100.0
Նուբարաշեն	53900.0-112350.0	45900.0	78600.0	78600.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	53900.0-435900.0	125500.0	166100.0	163600.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հոկտեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 1.5 %:

2005թ. հոկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 493 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. հոկտեմբերի համեմատ աճել է 1.9%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ՝ 3.4%-ով:

2005թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հոկտեմբերին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			հոկտեմբեր 2004թ.	հոկտեմբեր 2005թ.	սեպտեմբեր 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	36400.0-72700.0	36400.0	49200.0	49000.0
	Ապարան	13600.0-27300.0	19200.0	22700.0	21900.0
	Թալին	11400.0-25000.0	16200.0	21500.0	21600.0
Արարատ	Արտաշատ	25000.0-50000.0	30100.0	38600.0	37500.0
	Մասիս	36400.0-68200.0	32000.0	50200.0	49800.0
	Վեդի	22700.0-45400.0	21600.0	32900.0	32300.0
	Արարատ	20400.0-45400.0	21300.0	36400.0	36200.0
Արմավիր	Վաղարշապատ	50000.0-95400.0	54100.0	73200.0	72600.0
	Արմավիր	27300.0-59100.0	33200.0	44000.0	43600.0
	Մեծամոր	18200.0-36400.0	16600.0	24500.0	24100.0
Գեղարքունիք	Սևան	18200.0-40900.0	17600.0	29500.0	29400.0
	Գավառ	13600.0-29500.0	17000.0	21800.0	21400.0
	Մարտունի	22700.0-68200.0	18500.0	35900.0	35500.0
	Վարդենիս	9100.0-25000.0	8900.0	18700.0	18500.0
	Ճամբարակ	5900.0-20400.0	9100.0	10700.0	10300.0
Լոռի	Վանաձոր	27300.0-47700.0	32300.0	39300.0	38900.0
	Ստեփանավան	15900.0-29500.0	18700.0	22300.0	21700.0
	Սպիտակ	18200.0-45400.0	21000.0	26700.0	25600.0
	Այվերդի	9100.0-22700.0	13400.0	18000.0	17800.0
	Տաշիր	11400.0-25000.0	12900.0	19800.0	19600.0
	Թումանյան	4100.0-11400.0	5000.0	5200.0	5300.0
	Շամլուղ	2300.0-8400.0	2800.0	2700.0	2800.0
	Ախթալա	6800.0-16100.0	10200.0	10300.0	10400.0
Կոտայք	Արովյան	45400.0-90900.0	55100.0	75600.0	75500.0
	Նոր Հաճն	40900.0-63600.0	38200.0	54900.0	55100.0
	Բյուրեղավան	22700.0-50000.0	24900.0	34900.0	34400.0
	Եղվարդ	31800.0-59100.0	27100.0	46500.0	45600.0
	Հրազդան	20400.0-40900.0	23200.0	27400.0	27700.0
	Ծաղկաձոր	18200.0-68200.0	45600.0	55600.0	54400.0
	Չարենցավան	25000.0-38600.0	21300.0	34500.0	34400.0
Շիրակ	Գյումրի	27300.0-54500.0	39200.0	41400.0	40900.0
	Արթինկ	15900.0-31800.0	15900.0	25300.0	25000.0
	Սարայիկ	8200.0-31800.0	14400.0	21400.0	21600.0
Սյունիք	Գորիս	20400.0-59100.0	19200.0	44000.0	43500.0
	Կապան	22700.0-36400.0	17200.0	31300.0	31100.0
	Սիսիան	18200.0-40900.0	18100.0	27100.0	26400.0
	Մեղրի	13600.0-34100.0	13000.0	22300.0	21200.0
	Ագարակ	9100.0-27300.0	12800.0	17600.0	17400.0
	Քաջարան	9100.0-22700.0	10100.0	16500.0	16700.0
	Դաստակերտ	4500.0-11400.0	6600.0	6300.0	6400.0
Վայոց Ձոր	Վայք	13600.0-36400.0	20500.0	28900.0	28600.0
	Եղեգնաձոր	25000.0-59100.0	27200.0	41200.0	40800.0
	Ջերմուկ	36400.0-81800.0	30100.0	44800.0	44300.0
Տավուշ	Դիլիջան	18200.0-50000.0	22700.0	32900.0	31900.0
	Իջևան	27300.0-72700.0	28700.0	37300.0	36800.0
	Բերդ	18200.0-45400.0	18100.0	25700.0	25400.0
	Նոյեմբերյան	9100.0-22700.0	14000.0	14200.0	14300.0

2005թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 1.1%:

2005թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 497 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 132, մյուս մարզերում միասին վերցրած՝ 365: 2004թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 14.8%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 30.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 9.9%-ով: 2005թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 2.5%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել՝ 0.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 3.7%-ով:

2005թ. հոկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հոկտեմբերին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		հոկտեմբեր 2004թ.	հոկտեմբեր 2005թ.	սեպտեմբեր 2005թ.
Կենտրոն	136300.0-908800.0	249900.0	332800.0	331500.0
Արաբկիր	90900.0-454400.0	200800.0	266900.0	265700.0
Քանաքեռ-Զեյթուն	68200.0-272600.0	120700.0	159000.0	158100.0
Նորք-Մարաշ	90900.0-454400.0	175600.0	180400.0	182100.0
Ավան	90900.0-363500.0	102500.0	136700.0	136800.0
Էրեբունի	68200.0-227200.0	99000.0	136800.0	136400.0
Շենգավիթ	68200.0-204500.0	116700.0	163600.0	160900.0
Դավթաշեն	90900.0-409000.0	126500.0	165100.0	163600.0
Աջափնյակ	68200.0-272600.0	115100.0	155500.0	156600.0
Մալաթիա-Սեբաստիա	68200.0-409000.0	114000.0	148200.0	147200.0
Նուբարաշեն	36400.0-113600.0	46300.0	86200.0	87000.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	36400.0-908800.0	133400.0	175600.0	175100.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հոկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսական էական աճ չի նկատվել:

2005թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հոկտեմբերին	Միջին գները /ՀՀ դրամ/
--------	----------	--	-----------------------

		/ՀՀ դրամ/	հոկտեմբեր 2004թ.	հոկտեմբեր 2005թ.	սեպտեմբեր 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	27300.0-81800.0	44100.0	50600.0	50300.0
	Ապարան	13600.0-36400.0	19900.0	24000.0	23800.0
	Թալին	13600.0-36400.0	17800.0	23000.0	22900.0
Արարատ	Արտաշատ	22700.0-50000.0	31500.0	39700.0	38300.0
	Մասիս	22700.0-68200.0	32800.0	52200.0	51300.0
	Վեդի	13600.0-40900.0	25000.0	34200.0	33600.0
	Արարատ	13600.0-45400.0	23200.0	38100.0	37200.0
Արմավիր	Վաղարշապատ	36400.0-81800.0	54600.0	75000.0	74300.0
	Արմավիր	22700.0-59100.0	33600.0	45700.0	45300.0
Գեղարքունիք	Սևան	9100.0-40900.0	21400.0	33600.0	32100.0
	Գավառ	9100.0-36400.0	20200.0	24100.0	22800.0
	Մարտունի	13600.0-45400.0	20800.0	38500.0	37400.0
	Վարդենիս	9100.0-31800.0	11000.0	21400.0	21100.0
	Ճամբարակ	4500.0-22700.0	11300.0	11700.0	11000.0
Լոռի	Վանաձոր	22700.0-50000.0	35800.0	40200.0	40300.0
	Ստեփանավան	13600.0-36400.0	24500.0	26700.0	27000.0
	Սպիտակ	13600.0-36400.0	24200.0	28400.0	26700.0
	Ալավերդի	9100.0-31800.0	14600.0	19200.0	18400.0
	Տաշիր	9100.0-31800.0	14000.0	20900.0	20800.0
	Թումանյան	4500.0-18200.0	5500.0	6600.0	6700.0
	Շամլուղ	2300.0-13600.0	3900.0	4100.0	4100.0
	Ախթալա	9100.0-22700.0	11000.0	11800.0	12000.0
Կոտայք	Աբովյան	31800.0-90900.0	55600.0	80500.0	78700.0
	Նոր Հաճն	18200.0-68200.0	38500.0	56600.0	56700.0
	Բյուրեղավան	18200.0-45400.0	25700.0	36100.0	35900.0
	Եղվարդ	22700.0-63600.0	27500.0	49300.0	49900.0
	Հրազդան	18200.0-40900.0	23300.0	29800.0	30100.0
	Ծաղկաձոր	31800.0-68200.0	49400.0	56700.0	56100.0
	Չարենցավան	18200.0-45400.0	21700.0	37900.0	38300.0
Շիրակ	Գյումրի	27300.0-59100.0	46500.0	43000.0	43500.0
	Արթիկ	9100.0-40900.0	17000.0	27500.0	27800.0
	Մարալիկ	13600.0-36400.0	15000.0	23400.0	23700.0
Սյունիք	Գորիս	18200.0-59100.0	20000.0	44900.0	44400.0
	Կապան	13600.0-40900.0	18400.0	33800.0	33900.0
	Միսիան	9100.0-40900.0	18900.0	28000.0	28200.0
	Մեղրի	13600.0-36400.0	14500.0	23800.0	23600.0
	Ագարակ	9100.0-36400.0	14300.0	19900.0	19700.0
	Դաստակերտ	4500.0-18200.0	7500.0	8600.0	8700.0
Վայոց Ձոր	Վայք	9100.0-36400.0	21000.0	29800.0	30200.0
	Եղեգնաձոր	18200.0-59100.0	27700.0	44700.0	44800.0
	Ջերմուկ	13600.0-40900.0	22400.0	30300.0	30200.0
Տավուշ	Դիլիջան	13600.0-45400.0	28300.0	34600.0	33200.0
	Իջևան	18200.0-45400.0	29200.0	38700.0	38200.0
	Բերդ	9100.0-40900.0	18200.0	26400.0	26400.0
	Նոյեմբերյան	9100.0-31800.0	15700.0	15100.0	15100.0

2005թ. հոկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան էական աճ չի նկատվել:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարվել են 2324.15 հա /այդ թվում՝ 22.24 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 2254.39 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 2280.45 հա հողերի

/այդ թվում՝ 22.19 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 2213.70 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 43.47 հա /այդ թվում՝ 0.05 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 40.69 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 0.23 հա բնակավայրերի հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1679.84 հա, որից 1674.19 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. հոկտեմբերին մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	16	1.67	15	3.55	0	0.00	72	9.92	17	7.05
Արագածոտն	9	55.21	2	0.22	7	0.09	49	29.70	40	3.51	1	0.004
Արարատ	12	64.79	81	8.20	6	0.30	106	193.77	62	5.57	1	0.003
Արմավիր	64	1109.96	0	0.00	11	0.43	95	564.23	52	5.22	0	0.00
Գեղարքունիք	7	18.53	3	0.26	1	0.50	7	13.00	3	0.42	0	0.00
Լոռի	0	0.00	3	0.12	3	0.36	28	30.88	8	0.58	0	0.00
Կոտայք	4	40.20	0	0.00	1	0.56	61	20.93	137	13.87	3	0.96
Շիրակ	15	6.32	33	0.86	24	0.37	22	19.23	8	0.56	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	7	10.51	1	0.14	0	0.00
Վայոց Ձոր	2	25.30	0	0.00	2	0.02	0	0.00	1	0.59	0	0.00
Տավուշ	3	0.64	4	0.41	0	0.00	21	10.52	2	0.22	0	0.00
ԸՆԴՀԱՆՈՒՄ	116	1320.95	142	11.74	70	6.18	396	892.77	386	40.60	22	8.02

2005թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են 1135 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ. հոկտեմբերին՝ 1029/ այդ թվում 512-ը՝ գյուղատնտեսական նշանակության /517/, 620-ը՝ բնակավայրերի /507/, 1-ը՝ արդյունաբերական օբյեկտների /5/, 2-ը՝ հատուկ պահպանվող տարածքների:

2005թ. հոկտեմբերին հողերի առուվաճառքներից 291 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ. հոկտեմբերին՝ 247/, այդ թվում 11-ը՝ /1.41 հա/ Երևանում /49/, իսկ 280-ը՝ /1311.79 հա/ մյուս մարզերում /198/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 112 միավորը /1299.42 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2004թ. հոկտեմբերին՝ 95/, 132-ը՝ /10.96 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /145/, 46-ը՝ /2.81 հա/ հասարակական կառուցապատման /7/ և 1-ը՝ /0.01 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր:

2005թ. հոկտեմբերին, հանրապետությունում արձանագրված 512 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 112-ը իրականացվել են աճուրդների, 10-ը՝ դատարանի վճիռների և 4-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա

մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	9	55.21	103.4	231.4	177.5	37	13.37	359.5	6741.0	1986.3
Ապարան								89.9	764.0	296.6
Թալին						8	11.44	89.9	755.0	256.2
Ծաղկահովիտ						4	4.89	76.4	943.7	139.3
Արարատի մարզ										
Արտաշատ	3	2.30	121.3	2256.0	1285.3	38	51.88	332.6	5392.8	1087.5
Մասիս						24	40.76	179.8	6741.0	1348.2
Վեդի	8	45.44	38.2	359.5	242.7	44	101.13	202.2	4494.0	799.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	81.70	22.5	494.3	195.5	36	23.37	292.1	4044.6	674.1
Բաղրամյան	50	1000.0	33.7	33.7	33.7	22	509.52	89.9	674.1	391.0
Վաղարշապատ	9	28.26	36.0	1285.3	375.2	37	31.34	440.4	8988.0	1137.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	0.75	188.7	494.3	292.1
Ճամբարակ	5	14.13	143.8	143.8	143.8			44.9	539.3	116.8
Մարտունի						3	1.41	44.9	1797.6	426.9
Սևան								44.9	449.4	173.0
Վարդենիս						3	10.84	27.0	530.3	170.8
Լոռու մարզ										
Այվերդի						3	0.97	161.8	2471.7	328.1
Գուգարք						2	1.66	224.7	2696.4	844.9
Սպիտակ						1	0.09	224.7	1483.0	467.4
Ստեփանավան						2	0.69	89.9	2247.0	269.6
Տաշիր						10	6.60	44.9	449.4	175.3
Կոտայքի մարզ										
Աբովյան						38	9.33	269.6	11235.0	2745.8
Եղվարդ	3	40.00	120.4	122.2	121.3	20	9.44	170.8	11235.0	1878.5
Հրազդան	1	0.20	350.5	350.5	350.5	3	2.16	112.4	2696.4	651.6
Շիրակի մարզ										
Ախուրյան						16	13.17	247.2	1685.3	359.5
Ամասիա								36.0	235.9	80.9
Անի						6	6.06	107.9	359.5	179.8
Աշոցք								44.9	112.4	94.4
Արթիկ	14	6.24	105.6	871.8	501.1			62.9	1078.6	152.8
Սյունիքի մարզ										
Գորիս						6	4.05	89.9	719.0	287.6
Կապան								53.9	898.8	202.2
Մեղրի								179.8	1905.5	404.5
Սիսիան						1	6.46	44.9	674.1	170.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	25.30	114.6	193.2	155.0			116.8	2696.4	1150.5
Վայք								53.9	1528.0	449.4

Տավուշի մարզ										
Բերդ								44.9	898.8	305.6
Իջևան	3	0.64	366.3	685.3	474.1	2	0.58	238.2	1797.6	737.0
Նոյեմբերյան						19	9.93	44.9	3748.0	382.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. հոկտեմբերին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 440 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 124-ը իրականացվել են աճուրդների, 3-ը՝ դատարանի վճիռների և 2-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						37	32430.0	112.4	3595.2	1932.4
Ապարան						1	1870.0	112.4	629.2	157.3
Թային	2	2216.0	110.1	116.8	114.6	1	300.0	44.9	359.5	67.4
Ծաղկահովիտ						1	520.0	44.9	359.5	62.9
Արարատի մարզ										
Արտաշատ	81	81960.0	215.7	440.4	280.9	15	15318.0	134.8	2696.4	705.6
Մասիս						27	20950.0	134.8	8988.0	880.8
Վեդի						18	17020.0	112.4	988.7	516.8
Արմավիրի մարզ										
Արմավիր						17	18327.0	134.8	2247.0	840.4
Բաղրամյան						4	4800.0	80.9	269.6	103.4
Վաղարշապատ						31	29121.0	134.8	4494.0	1168.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	680.0	134.8	898.8	301.1
Ճամբարակ	1	1000.0	85.4	85.4	85.4			44.9	134.8	71.9
Մարտունի						2	3480.0	89.9	449.4	152.8
Սևան	2	1600.0	680.8	680.8	680.8			89.9	898.8	116.8
Վարդենիս								44.9	224.7	67.4
Լոռու մարզ										
Այվերդի								67.4	269.6	94.4
Գուգարք						4	2766.0	67.4	2336.9	467.4
Սյիտակ						3	2640.0	62.9	449.4	98.9
Ստեփանավան	3	1200.0	276.4	276.4	276.4	1	400.0	44.9	269.6	71.9
Տաշիր								44.9	134.8	60.7
Կոտայքի մարզ										
Աբովյան						59	59073.0	134.8	6741.0	1415.6
Եղվարդ						64	64530.0	134.8	6741.0	1554.9
Հրազդան						13	14229.0	134.8	8988.0	984.2
Շիրակի մարզ										

Ախտորյան	25	5569.3	474.1	4750.2	1721.2	6	3757.0	112.4	1528.0	256.2
Ամապիա								44.9	134.8	60.7
Անի								67.4	179.8	83.1
Աշոցք								40.4	134.8	53.9
Արթիկ	8	3063.0	44.9	629.2	359.5	2	1810.0	67.4	921.3	116.8
Սյունիքի մարզ										
Գորիս								67.4	539.3	197.7
Կապան								67.4	629.2	184.3
Մեղրի								67.4	404.5	103.4
Սիսիան						1	1400.0	67.4	404.5	116.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	5880.0	67.4	1123.5	206.7
Վայք								76.4	629.2	101.1
Տավուշի մարզ										
Բերդ								44.9	629.2	76.4
Իջևան	2	1500.0	220.2	220.2	220.2	1	810.0	67.4	1348.2	310.1
Նոյեմբերյան						1	1340.0	44.9	629.2	94.4

2005թ. հոկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 3 գործարքներ /որից 2-ը՝ գյուղատնտեսական նշանակության/ 0.85 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ Արարատի /0.63հա/ և 1-ը՝ Լոռու /0.22 հա/ մարզերում:

2005թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1462 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 11.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 2.2 անգամ, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ՝ 46.2%-ով:

2005թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 59 բնակարանների, 49 անհատական բնակելի տների, 240 հասարակական, 32 արտադրական նշանակության օբյեկտների, 5 ավտոտնակի և 576 միավոր հողերի վարձակալության գործարքներ:

2005թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 20 վարձակալության գործարքների քանակը 2004թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 66.1%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ՝ 35.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալվել են 3260.59 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 3.86 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 3096.19 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 54.74 հա բնակավայրերի, 28.87 հա արդյունաբերական օբյեկտների, 5.82 հա հատուկ պահպանվող տարածքների, 18.63 հա էներգետիկայի օբյեկտների, 5.00 հա անտառային, 40.18 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 7.30 հա կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 1365.73 հա, որից 1356.28 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 19.35 հա, Վայոց Ձորի մարզում, որից 19.25 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1600.50 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. հոկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	18	1236.00	93	120.28
Արարատ	1	1.00	42	476.63
Արմավիր	0	0.00	20	23.16
Գեղարքունիք	12	239.50	175	401.06
Լոռի	0	0.00	26	63.11
Կոտայք	0	0.00	38	63.75
Շիրակ	2	124.00	99	141.39
Սյունիք	0	0.00	16	163.80
Վայոց Ձոր	0	0.00	21	19.25
Տավուշ	0	0.00	13	23.26
Ընդամենը	33	1600.50	543	1495.69

2005թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 971 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.7%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. հոկտեմբերի համեմատ աճել է 31.8%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ՝ 24.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /17.8%/, առանձնատների /16.6%/ և հողերի /15.9%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 499 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. հոկտեմբերի համեմատ աճել է 49.4%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ՝ 24.8%-ով:

2005թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 329.04 հա /այդ թվում 1.10 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 326.67 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում 246.25 հա, որից 245.79 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.003 հա բնակավայրերի հողեր, Լոռու մարզում:

2005թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 17 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2004թ. հոկտեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 50.0%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ նվազել՝ 25.0%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 38.1%:

2005թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1547 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 0.5%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ՝ 2.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /44.9%/: